ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ (ՄԱՔՐՈՂ ՆՅՈՒԹԵՐ) ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ N ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-18/33-1 ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 06 օգոստոս 2018թ.

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը ի դեմս գլխավոր քարտուղար Վ.Օհանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ՕՊՏՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Մակարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Նկատի ունենալով, որ ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված 22.06.2018թ թիվ 03/26-1/11320-18 գրությամբ Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից կազմակերպված գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում «ՕՊՏՇԻՆ» ՍՊԸ-ի հետ 11.06.2018թ կնքված տնտեսական ապրանքների (մաքրող նյութեր) մատուցման պայմանագիրը, այսուհետ «Պայմանգիր», դրական եզրակացություն չի ստացել՝ Կողմերը համաձայնեցին.

1.1 ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն լուծել Պայմանագիրը:

1.2 Պայմանագիրը լուծելու պահից դադարեցնել կողմերի պարտավորությունները:

2. Համաձայնագիրը կազմված է մեկ թերթից, կնքված է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Համաձայնագրի հետ կապված կողմերի իրավահարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրության համաձայն:

4. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

5. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Արտակարգ իրավիճակների նախարարություն	«ՕՊՏՇԻՆ» ՍՊԸ
ք. Երևան, Դավիթաշեն 4, Ա.Միկոյան փող. 109/8	Հասցեն՝ ք. Երևան, Էրեբունի փ. 26, 15
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	հ/հ 220098531159000
Հ/Հ 900011019313	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի Շենգավիթ մ/ճ
ՀՎՀՀ 00153247	ՀՎՀՀ 00474635
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Վ. Օհանյան	_____ Ա.Մակարյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ